/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

- **Գործուղված անձինք**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ՝ Ա. Սաֆյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Լեհաստան/Կրակով/ 26.06 – 29.06.2018 թ.

- **Նպատակը**

Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) և Լեհաստանի վիճակագրական գրասենյակի կողմից կազմակերպված "Որակը պաշտոնական վիճակագրությունում" խորագրով Եվրոպական կոնֆերանս (Q2018) և դրա շրջանակում "Պաշտոնական վիճակագրության ընդհանուր որակի կառավարումը վիճակագրական արտադրանքի արդյունավետության բարելավման համատեքստում" խորագրով վերապատրաստման դասընթաց

- **Քննարկված թեմաները**

2018թ. հունիսի 26-ին կայացած "Պաշտոնական վիճակագրության ընդհանուր որակի կառավարումը վիճակագրական արտադրանքի արդյունավետության բարելավման համատեքստում" խորագրով վերապատրաստման դասընթացի հիմնական նպատակն էր մասնակիցներին տրամադրել հիմնական տեղեկատվություն արդյունավետության տեսանկյունից վիճակագրական արտադրման բարելավման իրականացման մոտեցումների վերաբերյալ ազգային վիճակագրական ինստիտուտների ընդհանուր որակի կառավարման համակարգի համատեքստում:

Դասընթացը նախատեսված էր որակի կառավարման ոլորտում ներգրավված ազգային վիճակագրական գործակալությունների ղեկավար պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների համար:

Դասընթացին ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

- Դասընթացի ներածությունը և նպատակները
- Դասախոսների և մասնակիցների ներկայացում
- Ընդհանուր որակի կառավարում (TQM)՝ էվոլյուցիա, հիմնական ներկայացուցիչներ
- TQM-ի համակարգը և Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրքը՝ դեպի միասնական TQM-ի համակարգ
- TQM-ը վիճակագրական արտադրման գործընթացի իրականացման կատարելագործման համար՝ իրականացում, արդյունավետություն

- Գործընթացի արդյունավետության ապահովման հիմնական մոտեցումները (արդյունավետությունը) ազգային վիճակագրական ինստիտուտների գործընթացների պլանավորումը, իրականացումը, կատարողականի գնահատումը, բարելավումը
- TQM-ի հիմնական ներկայացուցիչների համաձայն կատարողականի գնահատումը
- Ծախսերի կառավարման սկզբունքները, որպես TQM համակարգի ինտեգրված մաս
- Հիմնական հարցեր՝ ծախսերի կառավարման համակարգի ներդրման համար
- Գործունեության վրա հիմնված ծախսերի և Ընդհանուր Վիճակագրական Բիզնես-գործընթացի Մոդելի (GSBPM) օգտագործումը ծախսերի կառավարման համար
- Կառավարման աշխատած ժամերը վիճակագրական արտադրման մեջ որպես գործիք դրա արդյունավետության կառավարման համար
- Վիճակագրական արտադրման ծախսերի կառավարումը՝ գործունեության հիմնական ցուցանիշներից մեկը
- Որակի արժեքը:

2018թ. հունիսի 27-ից 29-ը կայացած "Որակը պաշտոնական վիճակագրությունում" խորագրով կոնֆերանսի նպատակն էր շարունակել 2001թ. սկսված հաջող գործընթացը: Ստեղծման պահից ի վեր, այդ կոնֆերանսները դարձել են հիանալի շրջանակ ներկայացնելու և քննարկելու որակի առաջընթացն ու զարգացումը պաշտոնական վիճակագրությունում, ինչպես նաև փոխանակելու մեթոդները և լավագույն փորձը փորձագետների միջև տարբեր ոլորտներում (վիճակագրական ծառայություններ, միջազգային կազմակերպություններ, գիտնականներ և հետազոտողներ):

Կոնֆերանսի բացման լիագումար նիստում ներկայացվեց և քննարկվեց ազգային վիճակագրական մարմինների և Եվրոստատի համար մշակված Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի վերանայված տարբերակը՝ ընդունված 2017թ. նոյեմբերի 16-ին Եվրոպական վիճակագրական համակարգի կոմիտեի կողմից, որը ներառում է "Համակարգում և համագործակցություն" նոր սկզբունքը:

Կոնֆերանսը ներառում էր որակի վերաբերյալ համապատասխան թեմաներ հետևյալ տարբեր թեմատիկ ոլորտներում.

I. Որակի կառավարման համար ինստիտուցիոնալ շրջանակը պաշտոնական վիճակագրությունում

- Եվրոպական վիճակագրական համակարգի (ԵՎՀ) որակի շրջանակի մոդեռնիզացում
- Համակարգում և համագործակցում ազգային վիճակագրական համակարգերում, իրավական ասպեկտներ
- Որակի և ռիսկի կառավարում
- Որակի գնահատում, հաշվետվողականություն և մեթատվյալներ
- Մարդկային ռեսուրսները փոփոխվող վիճակագրական միջավայրում
- Նորարարությունն ու որակի մշակույթը վիճակագրական մարմնում

- Ծախսերի և որակի հավասարակշռում

II. Որակը պաշտոնական վիճակագրությունում և շահագրգիռ կողմերը

- Որակն որպես բազմաչափ որոշում՝ ճշգրտությունն ընդդեմ յուրաժամանակության
- Պաշտոնական վիճակագրության համապատասխանության բարձրացում
- Աշխարհատարածական տեղեկատվության օգտագործում՝ որակի բարձրացման համար
- Հաղորդակցում գիտական համայնքի հետ, նոր մեթոդներ և գործիքներ
- Սպառողների ներգրավում, ծառայությունների մատուցում և պաշտոնական վիճակագրության արժեքի խթանում
- Վիճակագրական մարմինների հանրային կապերը՝ փոխշահավետ հարաբերությունների կառուցում հասարակայնության հետ
- Տվյալների վիզուալիզացիա
- Վիճակագրական կրթություն և գրագիտություն
- Պաշտոնական վիճակագրության գնահատում և որակի հաղորդակցում
- Սոցիալական լրատվամիջոցները և պաշտոնական վիճակագրությունը

III. Որակը վիճակագրական արտադրման մեջ

- Որակը որպես առաջնահերթ ոլորտ ԵՎՀ 2020 թ. տեսլականում
- Շրջակա միջավայրի վիճակագրության որակի ասպեկտները, ժողովրդագրության վիճակագրություն և միգրացիայի վիճակագրություն
- Որակը նորարարության և հետազոտության ու զարգացման վիճակագրությունում
- Ցուցանիշների որակը գլոբալ տնտեսության չափման համար
- Որակը բազմաղբյուր վիճակագրական արտադրությունում
- Գլոբալ/ԵՎՀ ստանդարտներն ու ստանդարտացման գործընթացները
- Լրահաշվարկը, գնահատումը, վերակշռումը և կալիբրացիան որպես որակի բարելավման մեթոդներ
- Վիճակագրական բացահայտման հսկողություն
- Միկրոտվյալների փոխանակում
- Հրատապ գնահատումներ
- Տվյալների ինտեգրում
- Պատասխանի նվազող տեմպերը՝ խնդիրներն ու լուծումները
- Նորարարությունը տվյալների հավաքագրման և տարածման մեջ
- Որակի ասպեկտները փորձագիտական վիճակագրության և «խելացի» վիճակագրության մեջ:

Կոնֆերանսի փակման լիագումար նիստում քննարկվեցին հետևյալ պանելային հարցերը.

- Որոնք են պաշտոնական վիճակագրության առջև ծառացած նոր մարտահրավերները և տվյալների որակի վրա ազդող նոր զարգացումները

- Որոնք են ամենակարևոր միջոցները, որ վիճակագիրները պետք է ձեռնարկեն անդրադառնալու այս որակի մարտահրավերներին
- Ինչպես կարող են սպառողներն աջակցել վիճակագրական գրասենյակներին հաղթահարելու այս մարտահրավերները
- Ինչ տեսակի գործընկերություններ կարող ենք մենք օգտագործել և ում հետ՝ հաղթահարելու այս մարտահրավերները
- Ինչպես ենք մենք օգտագործում բաց տվյալները որպես որակի բարելավման միջոց
- Ինչպես կարող է ԿԶՆ-ի մշտադիտարկման գլոբալ համակարգն օգտագործվել ընդհանուր առմամբ բարելավելու պաշտոնական վիճակագրության որակը:

- **Արդյունքները**

Մասնակցությունը կոնֆերանսին և դասընթացին հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչներին՝ կիսվելու իրենց խնդիրներով, փոխանակվելու գաղափարներով, տեղեկատվությամբ և փորձով, ծանոթանալու նշյալ բնագավառում միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից մեթոդաբանական գործիքակազմին, ստանդարտներին և ուղեցույցերին, առաջարկություններին և վերջին զարգացումներին, ինչպես նաև քննարկելու հեռանկարներն ու գործողություններն ուղղված որակի բարելավմանն իրենց ազգային վիճակագրական համակարգերում:

- **Նշումներ**

Կոնֆերանսի ընթացքում տեղի ունեցան բանակցություններ և քննարկումներ Եվրամիության վիճակագրական ծառայության (Եվրոստատ) ներկայացուցիչ տիկին Կլաուդիա Յունկերի, Դանիայի, Նորվեգիայի, Իտալիայի և Լատվիայի վիճակագրական ծառայությունների ներկայացուցիչների հետ հետագա համագործակցության հնարավորությունների շուրջ որակի կառավարման բնագավառում և հնարավոր երրորդ ԵՄ Թվինինգ ծրագրի շրջանակում ու ԵՄ ԹԱՅԵՔՍ գործիքի ներքո:

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի կողմից:

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Ա. Սաֆյան